ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանի գրասենյակ

ՈՒԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին

Երևան
2010

Ձեկույցը պատրաստվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ: Սույն ուսումնասիրության մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները, որոնք կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետների հետ:

Ձեկույցի հեղինակներն են՝

Ասլանյան Լարիսա, Վ. Բրյուսովի անվ. Երևանի պետական լեզվաբանական համալսարան

Գյումջիբաշյան Կարապետ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

Գրիգորյան Արիադնա, Վ. Բրյուսովի անվ. Երևանի պետական լեզվաբանական համալսարան

Խաչատրյան Սիրանուշ, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ

Հասասյան Անժելա, Հայաստանի ֆրանսիական համալսարան

Ձեկույցի խմբագիրն է ժողովրդագիր, տնտեսագիտական գիտությունների թեկնածու պրն. Ռուբեն Եգանյանը:

Տպագրված է «Ասողիկ» տպարանում

Բովանդակություն

Բովանդակություն 3

Հապավումներ 4

Ներածություն 5

Հետազոտված համակցության կառուցվածքը 9

Հարցման արդյունքները 12

Ամփոփում. եզրակացություններ և առաջարկներ 25

Հապավումներ

ՌՀՀ - Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան

ԵՏԱ - Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա

ՀՊՏՀ ԳՄ - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղ

ԳՊՄԻ - Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ

ՀՊԱՀ - Հայաստանի պետական ագրարային համալսարան

ՀՊՃՀ - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

ԵՊԼՀ - Վ. Բրյուսովի անվ. Երևանի պետական լեզվաբանական համալսարան

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

Ներածություն

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանի գրասենյակը Հայաստանում ուսանողական ժողովրդավարությունն ուսումնասիրելու նպատակով 2008թ. հունիսին Հայաստան էր հրավիրել Եվրոպական ուսանողական միության (ԵՈՒՄ) պատվիրակությանը:

Ուսումնասիրության արդյունքում ԵՈՒՄ թիմը ձևավորեց Հայաստանում ուսանողական ժողովրդավարությունը խթանելու առաջարկությունների փաթեթ[1], որի շրջանակներում ԵԱՀԿ Երևանի գրասենյակին առաջարկվեց նաև իրականացնել հակակոռուպցիոն արշավ ըստ Ռումինիայի և Սերբիայի դրական փորձի:

Հետևելով ԵՈՒՄ առաջարկին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարելու և գիտելիքահեն տնտեսություն ստեղծելու առաջնահերթություններին, ԵԱՀԿ Երևանի գրասենյակը 2009թ. նախաձեռնեց «Հայաստանի բուհերում կոռուպցիայի մասին իրազեկվածության և քննարկումների խթանմանն ուղղված ուսանողական քարոզարշավ» ծրագիրը: Ծրագիրը բաղկացած է մի քանի փուլից և ունի բազմաբնույթ նպատակներ.

- բարձրացնել իրազեկվածությունը և ծավալել քննարկումներ բուհերում կոռուպցիայի մասին,
- ներգրավել ուսանողներին բուհերում թափանցիկության խթանման և կոռուպցիոն դեպքերի դիտարկման գործընթացին,
- համախմբել ուսանողներին իրենց հուզող խնդրի շուրջ և կազմակերպել հակակոռուպցիոն քարոզարշավ,
- խթանել ուսանողների մասնակցությունը բուհի ժողովրդավարական կառավարման գործընթացին,

---

[1] Զեկույցը կարելի է բեռնել http://www.osce.org/yerevan/20144.html կայքից կամ ձեռք բերել ԵԱՀԿ Երևանի գրասենյակից

- հրավիրել շահառուների ուշադրությունը բարձրագույն կրթական համակարգի դրական և բացասական երևույթների վրա:

Ծրագրի նախագծման և իրականացման շրջաններում ԵԱՀԿ Երևանի գրասենյակը սերտորեն համագործակցել է Բելգրադի բաց դպրոց (Belgrade Open School) ուսանողական հասարակական կազմակերպության փորձագետների հետ:

Ծրագրի առաջին փուլը, որը ներառում էր ուսանողական խմբի ձևավորման գործընթացը, թրեյնինգների առաջին մասը և ուսումնական այցն Ալբանիա և Սերբիա, իրականացվել է Գերմանիայի դաշնային հանրապետության արտաբյուջետային ֆինանսական աջակցությամբ, իսկ հետագա քայլերը ֆինանսավորվել են ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից:

Ծրագրին մասնակցության հայտ ներկայացրած ուսանողներից անհատական հարցազրույցների եղանակով ընտրվեցին 6-ը (4-ը Երևանից, 2-ը Գյումրիից), որոնցից կազմվեց ուսանողական աշխատանքային թիմ:

Ուսանողական աշխատանքային թիմը նախ ստացավ համապատասխան օրենսդրական ակտերի, բուհերի կանոնադրությունների (միայն նրանց, որոնց կանոնադրությունները հնարավոր եղավ հայթայթել), առկա հակակոռուպցիոն ռազմավարությունների և աշխատանքային պլանների մի փաթեթ: Այնուհետև թիմը Երևանում դասընթացներ անցավ Սերբիայից ժամանած երկու փորձագետի կողմից՝ նվիրված հակակոռուպցիոն քարոզարշավներ կազմակերպելու նրբություններին, կազմակերպչական գործընթացի պոտենցիալ բարդություններին և ռիսկերին, դրանց հնարավոր լուծումներին և այլն: Դասընթացներից հետո թիմը մեկնեց ուսումնական ճամփորդության Ալբանիա, որտեղ մասնակցեց հարավ-արևելյան Եվրոպայում հակակոռուպցիոն ուսանողական ցանցի (Anti-Corruption Student Network in South-Eastern Europe, ACSN in SEE) ամենամյա զեկույց-հանդիպմանը, որի արդյունքում ծանոթացավ կոռուպցիայի դեմ պայքարի եվրոպական փորձին: Ալբանիայից հետո թիմը մեկնեց Սերբիա, որտեղ ունեցավ մի շարք օգտակար հանդիպումներ ուսանողական խորհուրդների, սերբ փորձագետների, հասարակական կազմակերպությունների և ուսանողական միությունների հետ:

Ձինված տվյալ ուղևորությունների ընթացքում ձեռք բերած գիտելիքներով և փորձառությամբ, թիմը ձեռնամուխ եղավ ծրագրի իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում նախանշվեց ուսանողական աշխատանքային խմբի ուժերով ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում իրականացնել կոռուպցիայի երևույթի նկատմամբ ուսանողների վերաբերմունքի, բուհական համակարգում դրա տարածվածության, պատճառների, ձևերի և մակարդակի, իրեն ուսանողության երևույթի դեմ պայքարի պատկերացումների, հնարավորությունների և պատրաստակամության բացահայտմանը և գնահատմանը նպատակամղված հետազոտություն և վերջինիս արդյունքների հանրայնացման հիման վրա խթանել հիմնախնդրի վերաբերյալ հասարակական քննարկումները:

Նախ որոշվեց հետազոտության անցկացման մեթոդը՝ անանուն հարցաթերթային ընտրանքային պիլոտաժային դիտարկում և մշակվեց դրա իրականացման մեթոդաբանությունը.

- Ճշտվեց գլխավոր հետազոտվող համակցությունը՝ Երևանի և Գյումրիի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջին երեք կուրսերի ուսանողների զանգվածը, դիտարկման միավորը՝ նրանում ներառված անհատ ուսանողը և ընտրանքային համակցության (հարցման ենթակա ուսանողների) խմբաքանակը՝ 1200 ուսանող:

- Որոշվեց հարցումների իրականացման կերպը: Միջոցների և ժամանակի սղության բերումով գերապատվություն տրվեց այսպես կոչված խմբային ինքնահարցման սկզբունքին (հարցվողների որոշակի խմբաքանակ հավաքվում է որևէ տարածքում՝ տվյալ դեպքում՝ հիմնականում լսարաններից մեկում, անցնում է հարցաթերթի լրացման կարգի վերաբերյալ հրահանգավորում, որից հետո հարցվողներից յուրաքանչյուրն ինքնուրույն լրացնում է իրեն տրամադրված հարցաթերթը և հանձնում հրահանգիչին):

- Գլխավոր համակցության միավորների թվից մշակվեց ընտրանքային համակցության ընտրման կարգը: Հար-

ցումների իրականացման կերպի պարտադրանքով նախապատվություն տրվեց ոչ թե անհատ ռեսպոնդենտների, այլ նրանց խմբերի՝ տվյալ դեպքում ուսուցման այս կամ այն տարվա առանձին մասնագիտական խմբերի պատահական ընտրության մեթոդին:

- Մշակվեց, այնուհետև Երևանի և Գյումիի բուհերի ուսանողներից ձևավորված ֆոկուս խմբերում փորձաքննություն անցնելուց հետո լրամշակվեց հետազոտության գլխավոր գործիքը՝ 10 հարցից կազմված հարցաթերթը:

Այնուհետև խմբի անդամների ուժերով իրականացվեցին հետազոտության դաշտային աշխատանքները՝ հարցումները Երևանի և Գյումրիի ԲՈՒՀ-երում: Դրանք կայացան 2010թ. մայիս-հունիս ամիսներին:

Այս փուլին հաջորդեցին համակարգչային SPSS ծրագրով հետազոտության նյութերի մշակումը, արդյունքների վերլուծումը և տվյալ հաշվետվության պատրաստումը (այս ամենը ևս իրականացվել է ուսանողական խմբի անդամների ուժերով):

Հետազոտված համակցության կառուցվածքը

Ըստ առանձին ԲՈՒՀ-երի հարցվածները բաշխվել են հետևյալ կերպ.

Գծապատկեր 1. Հարցվածների բաշխումն ըստ առանձին ԲՈՒՀ-երի



Բավական ուշագրավ և ինչ որ տեղ հատկանշական է հարցվածների ըստ սեռի բաշխումը, մասնավորապես այն փաստը, որ սեռը նշած հարցվածների թվում անհամամասնորեն ցածր է եղել տղաների տեսակարար կշիռը՝ ընդամենը 31.6%, գլխավոր համակցության 46.3%-ի դիմաց (տես գծապատկեր 2):

Սակայն, ի նկատի ունենալով «Ձեր սեռը» հարցին չպատասխանածների անսովոր բարձր տեսակարար կշիռը՝ 16.4% (ինչը կարող է բացատրվել երևի թե նրանով, որ հարցվածների տվյալ մասը պարզապես չի նկատել տվյալ հարցը), և ենթադրելով, որ վերջիններիս թվում գերակշռել են տղաները (ինչն իր հերթին ամենայն հավանականությամբ կարող է բացատրվել աղջիկների համեմատ նրանց պակաս ուշադիր լինելով), պետք է կարծել, որ իրականում հարցվածների թվում աղջիկների և տղաների բաժինների շեղվածությունն ավելի փոքր է եղել:

Մյուս կողմից, սակայն, չի կարելի բացառել, որ նման իրավիճակն այս կամ այն չափով հետևանք է նաև այն հանգամանքի, որ հարցմանը մասնակցելուց խուսափածների և հարցման օրը դասերից բացակայողների թվում տղաների բաժինն առավել մեծ է եղել:

Գծապատկեր 2. Հարցվածների և գլխավոր համակցության բաշխումն ըստ սեռի (% ընդամենի մեջ).



Ըստ ուսման տարիների հարցվածների բաշխման կապակցությամբ հարկ է ուշադրություն հրավիրել միայն ընտրանքային համակցության կազմում ոչ մեծ թվով (ամբողջի ընդամենը 3.7%-ը)՝ 4 և ավելի տարի ուսանածների առկայության հանգամանքի վրա:

Գծապատկեր 3. Հարցվածների բաշխումն ըստ ուսման տարվա (% ընդամենի մեջ).



Սա պայմանավորվել է սոսկ նրանով, որ հարցվողների խմբերի հավաքագրման ընթացքում ներկա գտնվելով, նրանք մասնակցության ցանկություն են հայտնել և հրահանգիչները կոռեկտ չեն համարել այդ ցանկությանը չընդառաջելը:

Գծապատկեր 4. Հարցվածների և գլխավոր համակցության բաշխումն ըստ վճարովի-անվճար ուսուցման (% ընդամենի մեջ).



Պետք է կարծել, որ հարցաթերթի ոչ այնքան հաջող ձևավորման և հարցվածների ոչ բավարար ուշադրության վերը հիշատակված գործոնով է պայմանավորվել նաև այն հանգամանքը, որ նրանց ավելի քան 28%-ը չի նշել, թե իր ուսումը վճարովի է, թե անվճար: Գլխավոր համակցության ըստ այս հատկանիշի բաշխման հարաբերակցությունից դատելով՝ վերջիններիս թվում ընդգծված կերպով գերակշռել են վճարովի հիմունքներով ուսանողները:

Հարցման արդյունքները

Հարցաթերթի առաջին հարցով խնդիր էր դրված բացահայտել ուսանողների պատկերացումները և տեսակետները բարձրագույն ուսումնական համակարգում կոռուպցիայի երևույթի տարածվածության պատճառների վերաբերյալ:

Գծապատկեր 5. Բարձրագույն ուսումնական համակարգում կոռուպցիայի տարածվածության պատճառները (% պատասխանների ընդհանուր թվում).



Գծապատկեր 5-ի տվյալների վկայությամբ հարցվածների առավել մեծ մասի՝ գրեթե 40%-ի կարծիքով բուհական կոռուպցիան համակարգային բնույթ է կրում՝ պայմանավորված հենց իսկ համակարգի անկատարությամբ:

Ի տարբերություն սրան, հարցվածների երկրորդ առավել մեծ խմբաքանակը՝ մոտ յուրաքանչյուր 4-րդը, որոշակի իմաստով «ինքնաքննադատական» մոտեցում դրսևորելով, երևույթի հիմնական պատճառը տեսնում է իրենց իսկ ուսանողների ծուլության մեջ:

Այս հետաքրքիր փաստերն ապացուցում են, որ ուսանողները, ընդունելով կոռուպցիայի համար պատասխանատվության իրենց բաժինը, միաժամանակ, սակայն, առավելապես հակված են մեղադրել համակարգը, քան իրենք իրենց:

Հարցվածների գնահատմամբ բուհերում կոռուպցիայի՝ ըստ կարևորության 3-րդ պատճառը դասախոսների ծանր սոցիալական վիճակն է՝ պատասխանների գրեթե 14%:

Ինչ վերաբերվում է հարցի պատասխանների թվում մատնանշված մնացած երկու տարբերակներին՝ «ուսանողների անտեղյակությունն իրենց իրավունքներից» և «ինձ դա չի հետաքրքրում», ապա նման պատասխաններ տվածների թվերը մոտավորապես հավասար են՝ հարցվածների 8-9-ական տոկոսները:

Նշենք նաև, որ այս և հաջորդ երկու հարցերում աղջիկների և տղաների պատասխանները որակական առումով գործնականում միատիպ լինելով, միաժամանակ վիճակագրականորեն նշանակալից քանակական տարբերություններ չեն դրսևորում:

Հարցաթերթի երկրորդ հարցը նպատակ էր հետապնդում ստանալ ուսանողների գնահատականները ՀՀ բարձրագույն կրթական համակարգում կոռուպցիայի տարածվածության մակարդակի մասին:

Գծապատկեր 6. Բարձրագույն ուսումնական համակարգում կոռուպցիայի տարածվածության մակարդակի գնահատականները (% պատասխանների ընդհանուր թվում).



Այս հարցի պատասխանների բաշխման, գծապատկեր 6-ում բերված տվյալների վերլուծությունը նախ և առաջ հիմք է տալիս արձանագրելու բուհական համակարգում կոռուպ-

ցիայի երևույթի տարածվածության բարձր մակարդակը՝ 68.6%: Հարցվածների ընդամենը 5.5%-ն է կարծում, որ համակարգում կոռուպցիա չկա, փոխարենը՝ նրանց ավելի քան 16%-ը գտնում է, որ տվյալ երևույթում ներքաշված են գործնականում բոլորը:

Հարցվածների առավել մեծ խմբաքանակի՝ յուրաքանչյուր 10-ից գրեթե 4-ի գնահատմամբ, համակարգում կառուպցիայի տարածվածության մակարդակն առնվազն մտահոգիչ է: Կարելի է կարծել, որ սա այն զանգվածն է, որը ոչ միայն անհանգստանում է երևույթի տարածվածությամբ, գիտակցում է նման կերպ շարունակելու անընդունելիությունը, դրա դեմ պայքարի անհրաժեշտությունը, այլև որոշակի ներուժ, պատրաստակամություն և կարողություններ ունի ներգրավվելու այդ պայքարում:

Մյուս կողմից սակայն, հարցվածների մոտ 30%-ը, գնահատելով երևույթի տարածվածության մակարդակը որպես ոչ այնքան բարձր, առնվազն անհարմարավետ չի զգում դրա առկայությունից:

Բարձրագույն կրթության կոռուպցիոն տեսանկյունից ամենառիսկային փուլի մասին հարցի պատասխանների բաշխումը բերված է գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7. Բարձրագույն կրթության փուլերի կոռուպցիոն ռիսկայնության գնահատականները (% պատասխանների ընդհանուր թվում).



Հարցվողների առավել մեծ մասը՝ գրեթե 40%-ը, որպես կոռուպցիոն առումով առավել ռիսկային փուլ գնահատել է ընդունելության քննությունները:

Դրան էապես չի զիջել բուն ուսուցման գործընթացի գնահատականը. ուսման տարիները կոռուպցիոն առումով առավել ռիսկային է գնահատել մոտ յուրաքանչյուր 3-րդ հարցվածը:

Այս երկուսի ֆոնի վրա պետական քննությունների կոռուպցիոն ռիսկայնության գնահատականը պակաս նշանակալից է. այդ փուլը առավել ռիսկային են գնահատել հարցվածների միայն շուրջ 12%-ը: Հարկ է նշել, սակայն, որ չի բացառվում, որ այս գնահատականը այս կամ այն չափով պայմանավորված է նաև նրանով, որ հանդիսանալով ցածր կուրսերի ուսանողներ, հարցվածները դեռևս ոչ այնքան հստակ պատկերացում ունեն պետական քննությունների գործընթացի մասին:

Այն հարցին, թե անձամբ իրենք ճանաչում են արդյո՞ք որևէ մեկին, ով կոռուպցիոն երևույթի մասնակից է եղել, յուրաքանչյուր 4-րդ հարցվածը տվել է դրական պատասխան (տես գծապատկեր 8):

Հարցվածների ևս 36.5%-ը լսել է նման փաստի մասին: Եթե սրանց ավելացնենք այն հարցվածներին (5.1%), ովքեր լսել են կոռուպցիոն դեպքի մասին, սակայն հավատ չեն ընծայում նման լուրերին, ապա ստացվում է, որ 10 ուսանողից ավելի քան 8-ն ուղղակի կամ անուղղակի տեղեկություններ ունեն բուհերում տեղի ունեցած կոռուպցիոն դեպքերի մասին (այսինքն, ընդհանուր հարցվածների ***82.2%***):

Գծապատկեր 8. Ճանաչո՞ւմ ես արդյոք ինչ-որ մեկի, ով կոռուպցիայի մասնակից է եղել (% պատասխանների ընդհանուր թվում).



Այստեղ մատնանշման արժանի է նաև այն հանգամանքը, որ կառուպցիայի դեպքերի մասին լսած աղջիկների բաժինը 13 տոկոսային կետով ավել է, քան տղաներինը (համապատասխանաբար 41.3% և 28.3%): Սա երևի թե կարող է բացատրվել աղջիկների այսպես կոչված «անթել հեռախոսի» գործունեությամբ:

Գծապատկեր 9. Հավատում ես, ո՞ր կաշառակերության դեպքի բացահայտման դեպքում մեղավորները համապատասխան պատժի կենթարկվեն (% պատասխանների ընդհանուր թվում)



Յուրաքանչյուր 3-րդ հարցված ուսանողը, գնահատելով կոռուպցիան որպես համակարգային երևույթ, համոզված է, որ դրա բացահայտված դեպքերում ներառվածները չեն պատժվի (տես գծապատկեր 9): Ուշագրավ է, որ այս առումով տղաների և աղջիկների գնահատականները լիովին նույն են:

Դժվար է որպես հուսադրող գնահատել նաև այն, որ հարցվածների առավել մեծ խմբաքանակը՝ ամբողջի ավելի քան 40%-ը և աղջիկների անգամ 47.4%-ը, համոզված չլինելով պատժի անխուսափելիության հարցում, ընդամենը հնարավոր են համարում «ինչ որ միջոցների» ձեռնարկումը:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարցվածների ավելի քան 7%-ը հետաքրքված չէ կաշառակերության երևույթում ընդգրկվածներին պատժելու խնդրով, կարելի է փաստել, որ հարցվածների միայն փոքր մասն է՝ ամբողջի մոտ 18%-ը, կարծում՝ նման պատիժից չի կարելի խուսափել: Հետաքրքիր է այս առումով աղջիկների առավել լավատես լինելը՝ 24.1%՝ տղաների միայն 14.1%-ի դիմաց:

Ըստ գծապատկեր 10-ի տվյալների, հարցվածների գրեթե 2/3-ի գնահատմամբ պետական մարմինները կոռուպցիայի դեմ կամ չեն պայքարում (մոտ 27%), կամ ընդամենը ձև են անում, թե պայքարում են (գրեթե 36%):

Նման պայքարի դրսևորումներ տեսնում է հարցվածների միայն 27.6%-ը, ընդ որում՝ նրանցից միայն ամեն երրորդն է կարծում, որ այդ պայքարն արդյունավետ է:

Գծապատկեր 10. Ըստ քեզ, պետական մարմինները պայքարու՞մ են կոռուպցիայի դեմ (% պատասխանների ընդհանուր թվում)



Նշենք, որ այս հարցում ևս միակ ընդգծված սեռային առանձնահատկությունը աղջիկների առավել բարձր լավատեսությունն է՝ ի տարբերություն տղաների 6%-ի, նրանց գրեթե 14%-ն զգում է կոռուպցիայի դեմ պետական մարմինների պայքարի դրական արդյունքները:

Գծապատկեր 11-ի տվյալներից դատելով, հարցվածների կեսից ավելին ուսանողական խորհուրդներին չի վստահում:

Չվստահողների հիմնական մասը (հարցվածների գրեթե 38%-ը), դա պատճառաբանում է նրանով, որ անկախ լինելով հանդերձ, այդ խորհուրդները միաժամանակ լուրջ դրական գործունեություն չեն ծավալում և հիմնականում հանդիսանում են ձևական կառույցներ:

Որպես ուշագրավ փաստ արձանագրենք, որ նման տեսակետ ունեցողների թիվը զգալիորեն ավելի պակաս կարող էր լինել, եթե, ի տարբերություն տղաների միայն մոտ 30%-ի, աղջիկների ավելի քան 42%-ը «չքվեարկեր» դրա օգտին:

Գծապատկեր 11. Արդյոք վստահու՞մ ես ուսանողական խորհուրդներին (% պատասխանների ընդհանուր թվում)



Հարցվածների ևս 12.5%-ը չի վստահում ուսխորհուրդներին, քանի որ համարում է համալսարանի ղեկավարությունից կախվածության մեջ գտնվող կառույցներ:

Ուսանողական խորհուրդներին վստահության քվե են տվել 10 հարցվածներից միայն մոտ 4-ը, ընդ որում որպես հուսադրող կարող է գնահատվել այն հանգամանքը, որ վերջիններիս գերակշիռ մասը դա արել է հաշվի առնելով այդ կառույցների կողմից ուսանողների շահերի պաշտպանության որոշակի դեպքեր: Այսպիսի գործունեության ծավալման վառ օրինակ է ՀՊՃՀ ուսանողական խորհուրդը, որն իր գործողությունների ակտիվ լուսաբանում է իրականացնում ինտերնետային տարբեր միջոցներով, ինչի շնորհիվ ՀՊՃՀ ուսանողական խորհրդի վարկանիշը հարցված ուսանողների շրջանում ամենաբարձրն է (7.9%)

Գծապատկեր 12. Առանձին ԲՈՒՀ-երի հարցվածների բաշխումն ըստ «Արդյոք վստահու՞մ ես ուսանողական խորհուրդներին» հարցի պատասխանների (% տվյալ ԲՈՒՀ-ի հարցվածների ընդհանուր թվում)



Գծապատկեր 12-ի տվյալները հիմք են տալիս միանշանակ արձանագրելու, որ ուսխորհրդների վստահության կամ անվստահության հանգամանքն անմիջականորեն պայմանավորված է իրենց իսկ այդ խորհուրդների գործունեության արդյունավետությունից՝ այդ թվում նաև ունեցած ձեռքբերումներին ուսանողներին շարունակական և լիարժեք տեղեկացման առումով: Որպես ասվածի վառ ապացույց կարելի է վկայակոչել ինտերնետային տարբեր միջոցներով իր գործողությունների ակտիվ լուսաբանում իրականացնող Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի ուսանողական խորհուրդի ուսանողների շրջանում ունեցած ընդգծված կերպով բարձր վարկանիշը՝ 76%, հետազոտության շրջանակներում ներառված մյուս ԲՈՒՀ-երի 20.7-49.5%-ի դիմաց:

Որպես ուսանողական խորհուրդների նկատմամբ վստահության պակասի լրացուցիչ հավաստում կարող է մեկնաբանվել այն հանգամանքը, որ իրենց իրավունքների խախտման դեպքերում հնարավոր են համարում դրանց օգնությանը դիմել հարցվածների 14%-ից էլ պակասը (տես գծապատկեր 12):

Գծապատկեր 13. Եթե քո իրավունքները խախտվեն, ի՞նչ կձեռնարկես (% պատասխանների ընդհանուր թվում)



Ի նկատի ունենալով ուսխորհուրդների նկատմամբ աղջիկների վստահության պակասը, առավել քան հատկանշական է նրանց թվում նման պատասխան տվածների բաժնի՝ տղաների բաժնի համեմատ գրեթե կրկնակի փոքր լինելը:

Փոխարենը, աղջիկների թվում նշանակալիորեն ավելի բարձր է նրանց բաժինը, ովքեր նմանօրինակ դեպքերում հակված են դիմելու համալսարանի ղեկավարությանը՝ պատասխանների ուղիղ կեսը, տղաների միայն 36.4%-ի դիմաց: Ուսումնասիրված համալսարանների մեջ ուսանողների շրջանում ամենամեծ վստահությունն են վայելում ՀՊԵՀ-ն և ԳՊՄԻ-ն (համապատասխանաբար 9.6% և 9.5%):

Կարծում ենք, որ առնվազն որպես մտահոգիչ կարելի է գնահատել այն փաստը, որ բարձրագույն կրթություն ստացող, գոնե տեսականորեն կազմակերպված, գիտակից և բավականաչափ տեղեկացված երիտասարդների մի զգալի մասը՝ գրեթե 17%-ը, իրավունքների խախտման դեպքերում կապավինի միայն ծնողների օգնությանը, շուրջ 9%-ն էլ, ոչինչ չանելով, ըստ էության պարզապես կհամակերպվի:

Գծապատկեր 14. Առանձին ԲՈՒՀ-երի հարցվածների բաշխումն ըստ «Եթե քո իրավունքները խախտվեն, ի՞նչ կձեռնարկես» հարցի պատասխանների (% տվյալ ԲՈՒՀ-ի հարցվածների ընդհանուր թվում)



Անցնելով գծապատկեր 14-ի տվյալներին ընդամենը նշենք, որ դրանք մեկ անգամ ևս վկայում են, որ արդյունավետ և նպատակասլաց աշխատանքի դեպքում ուսանողական խորհուրդները նշանակալից ներուժ ունեն, ինչը սակայն այսօր առավելապես իրացվում է աննշան չափով: Որպես ասվածի հավաստում կարող է մեկնաբանվել այն փաստը, որ եթե արդյունավետ աշխատող ուսխորհուրդ ունեցող պետական ճարտարագիտական համալսարանի 10 հարցվածներից ավելի քան չորսն իրենց խնդիրները նախ և առաջ կվստահեին ուխորհրդին, ապա մյուս բուհերում, որոնցում պետք է կարծել տվյալ կառույցները մեղմ ասած պակաս արդյունավետ են աշխատում, ի դեմս ուսխորհուրդների իրենց շահերի պաշտպան տեսնող հարցվածների բաժինը լավագույն դեպքում կազմում է 15-18%, Վ. Բրյուսովի անվ. Երևանի պետական լեզվաբանական համալսարանում և Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում՝ անգամ ընդամենը 1-2%: Այստեղ հարկ է նշել, որ ուսխորհուրդների ներուժի չիրացման գործում, ամենայն հավանականությամբ, իրենց «ներդրումն» ունեն ոչ միայն անմիջաբար դրանցում ներգրավված անհատները, կամ թե համապատասխան բուհերի ղեկավարությունը, այլև, և երևի թե ոչ վերջին հերթին, ընդհանուր առմամբ բոլոր ուսանողները:

Հարցաշարի նախավերջին հարցը նպատակ ուներ պարզելու, թե հարցվածները որքանով են պատրաստակամ մաս-

նակցելու ի պաշտպանություն ուսանողների համալիր շահերի իրականացվող մասսայական միջոցառումներին՝ կոնկրետ դեպքում՝ բողոքի ցույցի:

Հարցի պատասխանի գծապատկեր 14-ում բերված արդյունքների վկայությամբ, հարցվածների աննշան մասն է՝ ամբողջի մոտ 6%-ը, այդ թվում աղջիկների՝ 8,3%-ը և տղաների՝ միայն 4.4%-ը, որ ոչ մի պարագայում նման մասնակցություն չէր ունենա:

Մնացած հարցվածների թվում առանձնանում են իրենց զանգվածներով գրեթե հավասարազոր՝ ամբողջի ավելի քան 1/3-ները, սակայն որակական առումով բավական տարբեր երկու խմբեր:

Դրանցից մեկը նրանք են, ում մասնակցությունը պայմանավորված է հետապնդվող խնդրի կարևորության գիտակցությամբ:

Երկրորդ խումբը, եթե կարելի է այդպես ասել, ավելի պրագմատիկ մոտեցում ունի՝ հարցվածները կմասնակցեին միայն հաղթանակի որոշակի երաշխիքներ ունենալու դեպքում:

Գծապատկեր 15. Եթե քո համալսարանի ուսանողները բողոքի ցույց կազմակերպեին ի պաշտպանություն ուսանողների շահերի, ի՞նչ պարագայում կմասնակցեիր (% պատասխանների ընդհանուր թվում)



Հետաքրքիր է, սակայն, երևի թե ոչ անակնկալ, որ եթե այսպես կոչված «գիտակիցների» բաժինը տղաների և աղջիկների մոտ մոտավորապես հավասար է, ապա «պրագմատիկների» բաժինը զգալիորեն ավելի բարձր է աղջիկների մոտ՝ ամբողջի գրեթե 40%-ը, տղաների միայն 27%-ի դիմաց:

Հարցվածների ևս երեք՝ քանակապես նույնպես մոտավորապես հավասարազոր (ամբողջի 9-10-ական տոկոսները կազմող) խմբեր էլ իրենց մասնակցությունը պայմանավորում են կամ ընկերների մասնակցության, կամ պատժվելու վտանգի բացակայության և կամ այլ հանգամանքներով:

Ստացվում է այնպես, որ կա ուսանողների մի առավել ակտիվ, գիտակից, իր շահերի պաշտպանության համար պայքարելու միտված զանգված (հարցվածների 35.2%), որի ջանքերի հաջողականությունից կախված ուսանողական ակտիվության համալիր մակարդակը կարող է էապես աճել:

Ուսանողները 10-րդ բաց հարցին, թե «ի՞նչը կցանկանայիր փոխել ՀՀ կրթական համակարգում: Ի՞նչ խորհուրդ կտայիր ՀՀ Կրթության ու գիտության նախարարությանը», տվել են բազմապիսի պատասխաններ և առաջարկներ, որոնցից են՝ խստացնել և բարեկարգել ընդունելության քննությունների ընթացակարգը, հետ կանգնել Բոլոնիայի բարեփոխումներից և վերադառնալ նախկին կրթական համակարգին, լավագույնս իրականացնել Բոլոնիայի բարեփոխումների ծրագիրը, զգալի փոփոխություններ կատարել կրթական համակարգում և կառավարությունում (այդ թվում՝ կադրային), բուհերում ուսանողների համար մատչելի դարձնել համացանցը, ավելացնել մասնագիտական քննություն բուհ ընդունվելու ժամանակ, բարեփոխել դպրոցական կրթության որակը, ավելացնել կրթաթոշակի չափը, վերափոխել և ժամանակակից դարձնել ուսումնական պլանը, արդար լինել և այլն: Հարցվածների զգալի մասը հոռետեսորեն էր տրամադրված, պատասխանելով, թե «նույնիսկ եթե ինչ-որ բան առաջարկեմ, միևնույնն է, ոչինչ չի փոխվի»: Եզրափակելով նշենք, որ դիտարկված բոլոր առումներով վճարովի և անվճար համակարգերի, ուսման տարբեր տարիների ուսանողների գնահատականները սկզբունքայնորեն չտաբերվելով, դրսևորել են սոսկ որոշ, ոչ էական քանակական շեղումներ:

Ամփոփում. եզրակացություններ և առաջարկներ

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝գոհունակությամբ պետք է նշենք, որ մեզ հաջողվեց հասնել մեր առջև դրված նպատակին՝ մենք պարզեցինք ուսանողների վերաբերմունքը բուհերում կոռուպցիայի երևույթի նկատմամբ, բացահայտեցինք ուսանողների կարծիքները բուհական համակարգում կոռուպցիայի տարածվածության պատճառների և կոռուպցիոն դեպքերի նվազեցման հնարավոր տարբերակների մասին, ինչպես նաև պարզեցինք, թե ինչքանով են հայ ուսանողները պատրաստակամ պաշտպանելու իրենց իրավունքները և իրենց ուժերով պայքարելու կոռուպցիայի տարածման դեմ:

Հենվելով անցկացրած հարցման արդյունքների վրա կարելի է եզրակացնել, որ հայ ուսանողության շրջանում գոյություն ունի մի համընդհանուր անվստահություն կրթական համակարգի հանդեպ, և այն հաջողված միջադեպերի պակասի արդյունք է: Հարցումը նույնպես ցույց տվեց, որ ուսանողների մեծ մասը ցանկանում է ակտիվ դեր խաղալ իրենց ապագան կառուցելու գործում, բայց չգիտի, թե ինչպես դա անել, և եթե լինի ինչ-որ խթանիչ ուժ, նրանք կարող են արդյունավետ կերպով պաշտպանել իրենց շահերը:

Հարցման արդյունքում պարզեցինք նաև, որ ուսանողները բավական լավատեղյակ են իրենց իրավունքներից, սակայն չկա ներկայացուցչական մարմին, որը նախ ցույց կտա մի շարք դրական արդյունքներ ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանության ոլորտում և այնուհետև տեսանելի կդարձնի, թեկուզև միայն բուհական հանրությանը, այդ դրական լուծումները, որոնք կհանդիսանան ուսանողների կողմից այդքան սպասված դրական նախադեպեր: Հարկ ենք համարում շեշտել, որ նկատի ունենք ոչ թե եզակի դեպքեր (որոնք, վստահ ենք, պատահում են ցանկացած բուհում), այլ խնդրի համակարգված լուծում, ուսանողների իրավունքների աննախադեպ պաշտպանություն: Այս ամենը կյանքի կոչելու համար ուսանողները պետք է լինեն, նախևառաջ, առավելագույնս իրազեկված և համախմբված:

Առաջարկներ

1. Հաշվի առնելով ԵՊՃՀ ուսանողական խորհրդի փորձը, որն իր գործունեության վերաբերյալ դրական կարծիք է ստացել ուսանողների բավական մեծ խմբի կողմից, ի համեմատ այլ բուհերի ուսխորհուրդների, աշխատանքային թիմը խրախուսում է մյուս բոլոր ուսանողական խորհուրդներին հետևել այս օրինակին և ավելի շատ աշխատել հասարակայնության հետ կապերի (PR) ոլորտում: Թիմը վստահ է, որ ուսանողական խորհուրդներն իսկապես աշխատում են ուսանողների համար համալսարանական կյանքը տարբեր առումներով ավելի լավը դարձնելու ուղղությամբ, սակայն ցավոք, նրանց ջանքերը հիմնականում անհայտ են մնում, հաճախ հենց իրենց բուհի ուսանողների լայն շրջանների համար: Աշխատանքային խումբը խորհուրդ է տալիս բացել ուսանողական խորհրդի ինտերնետային կայք, Facebook-ի խումբ, հաղորդագրությունների ստենդ, կամ օգտագործել այլ միջոցներ, ինչպիսիք են լրագրերը կամ նորությունների ստենդերը համալսարանների ներսում, որոնք հասանելի կլինեն բոլոր ուսանողներին և պարբերաբար կթարմացվեն լուրերով, իրադարձություններով և ուսանողական խորհուրդների գործունեության մասին այլ նյութերով: Սա կնպաստի թափանցիկության հաստատմանը և ուսանողների տեղեկացված լինելուն, ինչպես նաև կօգնի ուսանողական խորհուրդին ձեռք բերել ավելի մեծ թվով ուսանողների վստահությունը:
2. Թիմը խորհուրդ է տալիս ուսանողներին պրոակտիվ լինել և հետաքրքրվել ուսանողական խորհուրդների գործունեությամբ, մասնակից լինել վերջիններիս աշխատանքին և պահանջել կառույցի պատշաճ գործունեություն, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ հարցված ուսանողների մոտ 35%-ը (գծապատկեր 11) գիտի դեպքեր, երբ տվյալ բուհի ուսանողական խորհուրդն աշխատել է պաշտպանել ուսանողների իրավունքները:
3. Աշխատանքային թիմը նպատակ ունի ստեղծել ուսանողական մի բլոգ, որի խնդիրը կլինի բարձրացնել կո-

ռուպցիայի խնդիրը բարձրագույն կրթության ոլորտում: Ուսանողներին կիրավիրեն ակտիվորեն մասնակցել ծավալվող քննարկումներին, փոխանակել նորություններ և կիսել փորձը, հարցեր բարձրացնել և աշխատել թիմի հետ այդ խնդրի լուծման ուղղությամբ: Թիմը նախատեսում է նաև ստեղծել ինտերնետային կայք և Facebook-ի պաշտոնական էջ:

4. Աշխատանքային խումբը մտադիր է հավաքել տարբեր բուհերի կանոնադրությունները և հասանելի դարձնել ուսանողներին՝ դրանք տեղադրելով պաշտոնական էջերում: Թիմի նպատակն է բարձրացնել իրազեկվածության մակարդակը՝ միջոցառումներ կազմակերպելով, ինտերնետային և ավանդական միջոցներով տեղեկատվությունը տարածելով՝ դարձնելով այն մատչելի բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են տվյալ հարցում: Ուսանողները պետք է ծանոթ լինեն իրենց համալսարանի կանոնադրությանը, դրանով սահմանված իրենց իրավունքներին և պարտականություններին, իրենց ուսխորհուրդների գործունեությանը և գործառույթներին:

5. Դասախոսներին թիմն առաջարկում է վերցնել արևմտյան երկրների օրինակը և ստեղծել նյութերին համապատասխան համակարգված դասընթացի մի ծրագիր, որը հետագայում կվերանայվի և կհաստատվի գիտական խորհրդի կողմից: Հաստատված բոլոր նյութերը պետք է մատչելի լինեն ուսանողներին իրենց բուհի կայքի կամ/և գրադարանի միջոցով: Ըստ Բոլոնիայի գործընթացի չափանիշների՝ պետք է լինի պարտադիր դասերի ցանկ, ինչպես նաև մի քանի կամընտրական դաս ընտրելու հնարավորություն: Բազմաթիվ ուսանողներ իրենց՝ Կրթության և գիտության նախարարությանը հղած առաջարկությունների մեջ նշել էին, որ իրենք ցանկանում են ավելի շատ ազատություն ունենալ իրենց առարկաներն ընտրելու մեջ, քանի որ շատ դեպքերում ուսանողներն ավելի շահագրգռված կլինեն սովորելու այն, ինչն իրենց ավելի հետաքրքիր է, քան այն, ինչն ավելի քիչ է հետաքրքրում, սակայն պարտադրված է բուհի կամ ֆակուլտետի կողմից:

6. Թիմը գտնում է, որ բոլոր դասախոսները պետք է պարբերաբար գնահատվեն և թափանցիկությունն ապահովելու համար գնահատման արդյունքները պետք է հասանելի լինեն ինչպես դասախոսական կազմին, այնպես էլ ուսանողությանը:
7. Ուրախալի է այն փաստը, որ կառավարությունը վերջերս նոր ջանքեր է գործադրել ՀՀ բարձրագույն կրթության շրջանակներում կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Խումբը հույս ունի, որ ուսանողներն ավելի շատ ներգրավված կլինեն նշված ծրագրի շրջանակներում:
8. Բազմաթիվ ուսանողներ բարձրացրել են անկախ և անկողմնակալ կենտրոն ստեղծելու հարցը, որը ոչ միայն ուսանողներին կզինի տեղեկատվությամբ, որը նրանց անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ պայքարելու համար, այլ նաև խորհրդատվական ծառայություններ կմատուցի, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ուսանողները ցանկանում են տեսնել մեկին, ով կպաշտպանի իրենց իրավունքներն իրենց փոխարեն, սակայն թիմը կարծում է, որ ուսանողները պետք է սովորեն և գիտակցեն, որ ոչ ոք չի կարող պաշտպանել իրենց իրավունքներն իրենց փոխարեն: Նման կենտրոնը, զինելով նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ, կարող է միայն օգնել նրանց պաշտպանել իրենց իրավունքները: Ուսանողներն իրենք պետք է լինեն իրենց ապագայի կերտման ակտիվ մասնակիցը:

Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում կոռուպցիայի վերացման գործընթացը պետք է ընդունվի համակարգի երկու եզրերի՝ ուսանողների և կառավարության կողմից: Երկու կողմերն էլ պետք է շահագրգռված և հետաքրքրված լինեն լիովին ներգրավվելու այս գործընթացին: Երկուսն էլ պետք է խրախուսեն մեկը մյուսին, և միևնույն ժամանակ վերահսկեն միմյանց գործունեության արդյունավետությունը: Միայն այս դեպքում կարելի է պայքարել կոռուպցիայի դեմ և լինել հաջողակ և արդյունավետ:

978-92-9235-868-6